

**ՔՐՈՋ ՍԻՄՎՈԼԻ ԵՐԵՔ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ.
ԵՐԿԻՐ. ԵՐԱՋ. ԼԵԶՈՒ.
ԹՐԱԿԼ. ՏԵՐՅԱՆ. ՑԵԼԱՆ**

Գեորգ Թրակլի բանաստեղծությունը հետևում է մահվան կանոնին: Պատռվածքին, քանի որ մահը իմաստային պատմվածք է մարդու երկրային ներկայության մարմնի վրա: Մարդու կյանքը յուրահատուկ հակասություն է, քանի որ կայանում է որպես անլուծելի մղումների հաստատում պարադոքս: Կյանքի կոչված լինելը նշանակում է կոչված լինել մահվան և ամեն գալուստ իր էության մեջ սոսկ հեռացում է:

Հոգին օտար է երկրի վրա:

(«Հոգու գարուն»)¹

Մարդու և երկրի միջև հաստատված է օտարության հարաբերություն հակառակ այն ամենի, ինչը պատմականորեն վկայված է մարդու մասին որպես երկրային էակի:

Գեղեցիկ է մարդը և խավարում հայտնվող:

(«Հելիան», էջ 93)

Սա նշանակում է, որ երկրային գոյության մեջ, որտեղ մարդը ներկա է իր էության առավելագույնը դրսևորելու և երկրային գեղեցիկը իր մեջ առնելով կատարյալ թանձրության բերելու համար, նա լուր ամենամութ կետում ու կորստի խավարում թաքցնվող է: Ամեն դեպքում նա, ով երկիր գալու առաքելության մեջ իրագործվում է որպես հեռացող: Երկփեղկված բնությունը բնությունն է: Գալով Երկիր, մարդը թողնում է միայն հեռացման նշանը և նշանն այն բանի, որ Երկրի վրա արմատ նետելու նկրտումը մի մթին տենչանք է, ոչ բնական և ուրեմն չի ստանա բնական բավարարում: Հելիանը, էլիզը, Սեբաստյանը, Կասպար Հաուզերը՝ նրանք են, ում Թրակլի լեզուն տալիս է «օտարական»,

1 Գեորգ Թրակլ, Բանաստեղծություններ, գերմաներենից թարգմանությունը՝ Հակոբ Մովսեսի, Երևան, 2007, էջ 159: (Այս հրատարակությունից հետագա մեջբերումները կտանք փակագծերում նշելով էջը:)

«առաճնացյալ», «վաղամեծիկ» և «միանձն» անունները, նրանք, ում էությունը պահանջում է, որ նրանք կանչված և շրջված լինեն կեռնեխի կանչով ու աշնան ավարտով: Նրանց էությունը բացվում է միայն հրաժեշտի պահին:

Բաժանումը և հեռացումը նշող սիմվոլների թվում Թրակի բանաստեղծության մեջ ամենից առեղծվածայինը քույրն է: Քույրը մղված է ավարտի մեջ: Քույրը մթնշաղի մեջ, գիշերվա մեջ, մայրամուտի մեջ, քույրը մահվան մեջ ցրում է իր անվան իմաստաբանական ջերմությունը:

Դեռևս հնչում է քրոջ լուսնային ձայնը

Հոգևոր գիշերվա միջով:

(Հոգևոր մթնշաղներ, 136)

Հայտնվում է քույրը աշնան մեջ և սև քայքայումի:

(Հանգիստ և լռություն, 130)

Քույրը ակնթարթի մեջ է: Ակն-թարթի, այսինքն՝ երբ կոպերը փակում են լույսի աշխարհը: Մարդու ժամանակը բաղկացած է ակնթարթներից, որոնց մեջ բերված է կուրության: Ակնթարթը պատասխանատու է ողջ ժամանակի համար: Քույրը հայտնվում է անբերևոյթ, քանի որ հենց այն է, ինչը որպես տրված միշտ ծանաչվում է հրաժեշտի մեջ: Քույրը երկրայինն է, բայց այն պահին, երբ երկիրը չի երևում: Գուցե քույրը հենց երկիրն է: Ամեն դեպքում այդպես հասկանալի է դառնում մարդու և երկրի մի շատ որոշակի փոխադարձ ձգողություն, որը չի հանգում միասնության:

«Ոգու ֆենոմենոլոգիայում» Հեգելը խոսում է եղբոր և քրոջ արյան հավասարակշռության մասին: Հավասարությունը կա, քանի դեռ բնական ծանապարհով չի կայանում արյունների միախառնումը. այդ արյունն արդեն խառնված է առավել բարձր մակարդակում՝ աստվածային օրենքի: Չէ՞ որ նրանք արյունակիցներ՝ են հենց այդ իրավունքով:

Սակայն եղբոր և քրոջ միջև առկա է անխառն հարաբերություն: Նրանք ունեն մույն արյունը, որը նրանց մեջ հանգել է դադարի և հավասարակշռության...

Եվ այդուհանդերձ եղբայրը քրոջ համար հավասար էություն է ընդհանրապես, նրա ծանաչումը եղբոր մեջ մաքուր է և ազատ է բնական վերաբերության խառնուրդից: Ահա ինչու քրոջ եզակիության և բարոյական պատահականության անտարբերությունները այս իմաստով չկան: Սակայն ծանաչող և ծանաչվող եզակի ինքնության պահը կարող է այստեղ հաստատել իր իրավունքը, որովհետև կապված է արյան հավասարակշռության հետ և տենչան-

քից ազատ հարաբերությամբ: Եղբոր կորուստը քրոջ համար անփոխարինելի է և վերջինիս պարտքը նրա առաջ ամենից բարձրն է:¹

Անփոխարինելի գուցե ամենաարտասովոր իմաստով: Ոչ այն, որ նկատի ունի կորստի և փոխարինելիության մասին սովորական պատկերացումը, երբ կորուստը հաջորդում է տիրապետումին: Քրոջ դեպքում նախնական տիրապետումը պարզապես բացակայում է: Բայց չէ՞ որ ինչ-որ բան կորցնելու համար նախապես պետք է ունենալ այն: Այսպիսի կորուստը նախագո է, ինքնասկիզբ, զուրկ տիրապետման նախնական հիմունքից: Գուցե հենց այս իմաստով այն ոչ միայն նախագո, այլև գերադրական և *ամեն ինչից բարձր է:*

Թրակյան քույրը, որի աուրան որոշադրված է մթնշաղով, երկիրն է, որը երբեք չի տեսնում վաղամեռիկ եղբորը, քանի որ եղբայրը նրա համար սկսվում է բաժանումից: *Օրինաչափ չէ՞ արդյոք, որ Անտիգոնեի համար եղբայրը հաստատվում է միայն հուղարկավորության միստիկ փաստի մեջ, երբ հողը, զգացմունքը և եղբոր անձը միանում են սոսկ ավելի խորը բաժանում արձանագրելու համար: (Թերևս մի շատ ուշագրավ դիտանկյունից դա այդպես է նաև ֆուկսներյան Քվենթինի համար, ով փորձում է Քենդելսի հետ վիրտուալ ինցեստը չեզոքացնել ակտուալ ինքնասպանությամբ:)*

Թրակլի «Հայտնություն և մայրամուտ» արձակ բանաստեղծության խորհրդավոր դրվագում ասված է.

Քայքայվող կապույտից ելավ դժգույն դեմքը քրոջ, և այսպես խոսեց նրա բերանը արյունոտ. խրվիր սև փուշ:

(էջ 186)

Փուշը գործիքն է, որով ամեն սերմ իրագործում է կապը հողեղենի, երկրայինի հետ: Մարդու պարագայում երկրի հորդորը մնում է անկատար, քանի որ մարդը և երկիրը գոյում են զուգահեռ չափումներում և չեն հատվում: Մարդը չի կառնում երկրից, սակայն փոխադարձ ձգողությունը դրանից չի պակասում և մարդը երկրային է գուցե ներքին մղումով միայն: Եվ գուցե երկիրը մարդու կացարանն է ներքին ձգողությամբ միայն:

*Սիրուն է անտառը, գազանը խավարչտին,
Մարդը – որսորդ կամ հովիվ:*

(Արևը, 152)

1 G. W. F. Hegel, *Phänomenologie des Geistes*, Hamburg, 1988, SS. 299 u. f.

Երկրի վրա չհանգրվանող մարդը որսորդության և հովվության մեջ է փնտրում իր էականը: Որսալ գազանին և կամ էլ ուղղորդել նրան,- ահա մարդու երկրային զբաղմունքի երկու սլաքները, որոնցից և ոչ մեկն ի վերջո երկրային չէ, քանի որ որսալով գազանին, մարդը նրա միջոցով սոսկ երկրայնացման իր ծարավն է ամհույս փորձում հագեցնել, իսկ հովվության մեջ փորձում է նույն այդ գազանին դուրս բերել բնական կյանքի կաժանցներից և նետել սեփական անորոշի ծիր: Ամհույս: Ուրեմն մի կողմից՝ որսալ, բայց մյուս կողմից՝ ապանյութականացնել ու կորցնել երկրային գազանի մշանակությունը՝ պատվաստելով նրան օտարության իր ձակատագրին:

Գազանը, անտառը, մթնշաղը կազմում են ամեն քույրականի դիմագիծը մարդու համար, որքանով այդ ամենը նրա հեռացման ձակատագրի մեջ շարունակում է էական ու ներքին մնալ նրա համար: Չհանդիպող ու ներքին: Չէ՞ որ իբրև բաժանում իրացված հանդիպումն է մշտապես իմաստավորված խորություն բացում: Պարզապես արժեք ստանում: Եվ ձգողություն առաջ բերում:

* * *

Վահան Տերյանի խորհրդավոր բանաստեղծությունն ասում է.

*Եղի՜ր ինձ քույր...Թող որ հոգիս
Գտնի անդորր ոսկեվորիկ
Քո մայվածքի ցուքում հանգիստ -*

.....
*Չեռքս բռնիր և նրբանուր
Ինձ ուղեկցիր - ես որք, ես կույր...
Հոգիս այնպես կարոտ է սուրբ
Մտերմության.. Եղի՜ր ինձ քույր...*

Հոգու կարոտը ծարավ է սուրբ մտերմության: Մնացյալ բոլոր մտերմությունները, եթե անգամ կայանում են, թողնում են հոգին որք և կույր: Երկրային գոյը հոգու աչքերում աներևույթ է: Հոգին կարող է տեսնել միայն հոգեղենը և միայն հոգեղենը կարող է հոգին դուրս բերել որթությունից: Բայց ինչո՞ւ է փնտրվում հենց քույրը:

Անուրջը, երազը և հեքիաթը, որոնց անվերջ դիմում է Տերյանի բանաստեղծությունը, կայուն հակադրություն են կազմում իրականության աշխարհի հետ: Բայց այդ իրականությունը թրակլյան Երկիրը չէ: Գոյության միայնակը, որ փնտրում է երկխոսության իր Դու-ն, Տերյանի դեպքում գտնում է նրան միայն երազի աշխարհում: Երազի հակադրությունը արթնությունն է: Հետևաբար հենց արթնության հետ են սկիզբ առնում օտարության բոլոր հատումներ-

որը: Սակայն այս բանաստեղծության ներքին դիտավորությունը քնի աշխարհ վերադարձ ապահովելը չէ, այլ երկու աշխարհներից բացվող հոգևոր ասպարեզն անվանելը: Այդ անունը *քույրն* է:

*Ես ու դու էլ շղթայված ենք իրարու,
Կարոտավառ երազում ենք միշտ իրար,
Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան և հեռու,
Աստղերի պես և հարազատ և օտար...*

(Fatm)

Արթնությունը և երազը քրոջ երկու որակներն են, քանի որ երազում ի մի բերվածը արթնության մեջ եղբորից զատված և որոշակի հակադրության մեջ հավասարակշռված է: Շղթայված լինելու պերճանքն ու աղքատությունը հենց դա է. օղակների շարունակական հատում և միասնություն: Հերակլիտոսն ասում է, որ արթունների համար աշխարհը մեկ է, իսկ քնածներն ընկնում են յուրաքանչյուրն իր սեփական աշխարհը: Տերյանի դեպքում իրավիճակը հակառակն է: Արթնությունը բերում է անհատականի հատում: Հոգին և քույրը միասնություն են, սակայն արթնության մեջ՝ մշտապես հատված: Հենց այս իմաստով արթնությունը մի խորագույն խնդիր է՝ հոգու-հոգևոր խնդիր, քանի որ հոգին գոյանում է հենց այդ բաժանումից: Հոգին քրոջ հետ միանալու անըջային ձգտման արգասիք է, բայց նրանից բաժանվելուց հետո միայն: Չէ՞ որ գիշերով, քանի դեռ իշխում է երազը, հոգին չկա:

*Ես եմ, դու ես, ես ու դու
Գիշերում այս դյուբական,
Մենք մենակ ենք,- ես ու դու,
Ես ել դու եմ՝ ես չկամ...*

(«Երկու ուրվական»)

Սակայն քույրը նա է, որ սովորեցնում է նաև բաժանումը ապրել որպես միասնություն: Քույրը բաժանման իրականությունից վեր բացում է միասնության առավել բարձր հոգևոր մակարդակ: Եվ այդուհանդերձ հոգին, որն այդ քրոջ հարաբերությամբ անվերջ փորձում է պարզել սեփական գոյության հիմքերը, իր էության առնչությամբ, ինքնին, մնում է անորոշություն և որոնում, թախիծ և հարց:

*Դու հոգուս քույրն ես,
Բախտի համբույրը,*

Նոր կյանքի լուրն ես,
 Երկնքի բույրը.
 - Իսկ ես... ես, ասա.- քո ի՞նչն եմ ես...
 Դու մաքուր հույս ես,
 Գիշերիս լույսն ես,
 Վայելքի երգը,
 Իմ տիեզերքը.
 - Իսկ ես... ես... ասա, քո ի՞նչն եմ ես:

Քույրը երազն ու երազանքն է, այն, ինչը կանչում է հոգուն արթուն ժամանակ, այսինքն՝ այն ժամանակ, երբ ողջ-ախոհության սկզբունքները փակում են երազի խելացնոր հորիզոնը: Քույրն արարում է երազ ցերեկով, երազ հոգու համար՝ բաժանման ու թախծի մեջ, բայց այնպես, որ հոգին այսուհետ շարժման ու կենդանության, փնտրտուքի և հարազատության մախասպանման մեջ է:

Պաուլ Ցելանի «Radix, Matrix» բանաստեղծության առաջին տան մեջ ասված է.

Ինչպես քարին են ասում, ինչպես
 Դու,
 Անդորից,
 Հայրենիքից ինձ
 Քույրացած և
 Վաղահաս, դու,
 Դու, ինձ վաղաժամ,
 Գիշերվա Ոչնչի մեջ,
 Այլ-գիշերվա մեջ հանդիպած,
 Դու,
 Եվ Այլա-դու.¹

Բանաստեղծության վերնագիրը հուշում է, որ խորհրդավոր երկրորդ դեմքը մայրն է (matrix): Եվ միաժամանակ, քանի որ ցելանյան պոեզիան լեզվական տոպոսի և պատկանելության պոետոլոգիական փնտրտուք է, աղերսն

1 Paul Celan. *Die Gedichte*, Frankfurt am Main, 2005 (տողացի թարգմանությունը՝ Ս. Ս), S. 97.

առնչվում է լեզվին: Ցելանին հուզում է մայրենի լեզվի կենտավոյան բնութ-
յունը:

Ծագումով հրեա Պաուլ Ցելանը կորցրել է ծնողներին Միխայլովկայի հա-
մակենտրոնացման ժամբարում: Հայրը մահանում է տիֆից, իսկ մորը գնդա-
կահարում են գերմանացիները: Գերմաներենը բացում է կենտավոյան խոր-
քեր, քանի որ հրեա մայրը որդուն է հանձնում լեզու, որն ինչպես Մեդուսան
իրեն՝ մորը, վերածում է քարի: Այսպիսի լեզուն, որ մայրենիության իրավուն-
քով կապում է բանաստեղծին որոշակի սկզբի հետ, միաժամանակ կորցնում
է այդ սկիզբը: Լեզվի շնորհը, եթե լեզուն կարելի է շնորհի դիտել, խորիրդա-
նշում է մոր ատյանի փլուզում, որի առկայությամբ տարբերակիչ հատկանիշ
և անուն էր ստացել: Պատկանելության մշանը մնում է անգամ այն բանից
հետո, երբ դրա կոնկրետ բովանդակությունը դուրս է մնում գոյության չափու-
մից: Պակասը խոսում է որպես ծագման և ինքնության երազանք՝ գրգռելով
պատկանելության հիմքերին հասնելու ծարավը: Արդ, հենց այս ծարավն է
միակ բացարձակ չափումը լեզվում: Ինչ վերաբերում է ծագման հիմքերին,
ապա դժվար է գտնել սուբյեկտ, որի առնչությամբ հարաբերականության դա-
սը կզտներ առավել համոզիչ ապացույց: Ծագման հիմքերը լեզվի մեջ լուծում
են միայն փախուստի խնդիր: Չեն ցանկանում մնալ իրենց տեղում: Այնտեղ,
ուր կանգնած էր մայրը, բանաստեղծը հանդիպում է քարին, մոր խոսքի տե-
ղում՝ լռությանը, երգի փոխարեն՝ համրությանը: Սրանք են մայրենիության
ցուցիչներ:

Բայց ինչպե՞ս կողմնորոշվել լեզվի մեջ, որը դնում է պատկանելության
գիտակցության այսպիսի արգելք: Եթե անգամ գոյություն ունի մայրենի
ատյանի հետ որոշակի հանդիպում, ապա միայն գիշերով, որի մեջ մայրը
վաղահաս է, իսկ հանդիպումը վաղաժամ. *Վաղահաս, դու, /Դու, ինձ վաղա-
ժամ, / Գիշերվա Ոչնչի մեջ, /...հանդիպած*: Այս *հանդիպած*-ը որպես այդպի-
սին *չհանդիպած* է, և Ցելանը *հանդիպած* է կոչում մորը լոկ այն պատճառով,
որ հանդիպման պահին մայրը կորցնելով իրեն կազմող հատկանիշները, ներ-
կայանում է որպես ջույր. *Դու, /...ինձ / Բուրացած*:

Մոր և քրոջ իգականությունը էականորեն տարբեր է: Բայց ո՞ր կետում,
եթե ոչ հենց արգանդի (matrix) ֆունկցիոնալ վերափոխաստավորման: Առա-
ջինը խորիրդանշում է կենարար խորություն, որից զավակը հարկադրված է
կտրվել, իսկ երկրորդը՝ արգանդակցության որոշակի ստերիլ հարաբերու-
յուն, որի մեջ ամենից մոտը՝ արգանդակիցը, երբեք չի կարող բերվել գերա-
գույն ինտիմության: Եղբայրը կառուցում է քրոջ հետ իր հարաբերությունները
մերձության և հեռավորության մի պարադոքսալ զգացումի վրա: Չէ՞ որ քույրը
իգականության և արգանդի աշխարհն է, որը առավելագույնս մերձ լինելով,
մշտնապես փակ է:՝ Փակ են ջույր լեզուները, ահա ինչու թարգմանությունը,

որ ձգտում ունի կայանալ քույր լեզուների ձգողության դաշտում, մշտապես գործ ունի որոշակի հերմետիզմ հաղթահարելու խնդրի հետ: Հենց այս իմաստով թարգմանությունը բարձրագույն հերմենևտիկա է: Բնագիրը, որը սոսկ քույր լեզու է թարգմանող լեզվի համար, վերջինիս եղբայրական նկրտումներից մշտապես հակադրում է քույրական հասանելի-անհասանելիություն:

Սակայն քրոջ հանդեպ սերը ամենատրանսցենդենտ նկատառումների ողջ բարդությամբ հանդերձ ամենաիմանենտն է, ամենամիստիկը, քանի որ իր առարկան պահում է անբացատրելի և հերմետիկ արգելքի տակ, որը վերապրվում է արյունակցականության աներևույթ բարձրության վրա: Մայրենու առնչությամբ ակնարկված մայրական սկզբունքի քույրացումը լեզվի ներքին պարադոքսի արտահայտությունն է: (Չմոռանա՞նք, որ Ցելանի համար գերմաներենը ունի թշնամական չափում): 1966 թ., երբ հոգեկան մթագնումի թեքման անկյան տակ Պաուլ Ցելանը գտնվում էր Սրբ. Աննայի կլինիկայում՝ բուժ-քույրերը նվիրում են բանաստեղծին բազմագույն գրիչ, որը նա կոչում է բազմալեզու: Արգելված սովորական սրածայր գրիչը, որն ինչպես մայրենին մահվան (կամ ինքնասպանության) սպառնալիք է, քույրերի ձեռքով հակադրվում է բազմալեզվության գրչին, որն անվտանգ է: Քանի որ օտար է: «Չունենալով փետրածն գրիչ՝ գրում եմ գնդիկավոր գրչով՝ կլոր ու “բազմալեզու”, որ տվել եմ քույրերը» (26 մարտ, 1966): Քույրացող մայրը բազմալեզվության խոստումն է միալեզվության ներսում: Կամ՝ մոր քույրացումը բազմալեզվություն է արարում առանձին լեզվի մեջ, քանզի եթե մայրը խորհրդանշում է մայրենի լեզվի եզակիության կնիքը, ապա քույրը հետևողականորեն ջնջում է եզակիության բոլոր հետքերն ու նշանները, ամեն ձակատագրականություն, որը չի ցանկանում ծանաչել տարբերակներ և եղբայրներ: Մայրը հակադրված է քրոջը ինչպես եզակիությունը բազմակիությանը, հատկապես երբ լեզվական խնդրի կոնտեքստում այս ամենը մտածվում է մեկ նախաֆեմոմեն լեզվի և բաբելոնյան բազմալեզվության (քույր լեզուների) հակադրության մեջ: Լեզվին պատկանելու և նրա մեջ բնակություն հաստատելու մարդու համապարփակ տենչը կբավարարվի նույնքան և նույնկերպ, որքան և որկերպ որ բավարարում են քրոջը ծայրագույն ինտիմության մեջ վերապրելու եղբայրական նկրտումները: Լեզուն ձգում է, բայց դա ձգողություն է, որով կապված են պարզ հակադրությունները, երբ ամեն բան հանգում է մի երրորդ լեզվի արարման խնդրին, գուցե Բաբելոնին նախքան լեզուների քույրացումը և բաժանումը: Սակայն բաբելոնյան բազմալեզվությունն ըստ Ցելանի հենց մեկ լեզվի ձակատագիրն է, քանի որ իբրև մայրենի տրվելով լեզվակրին, այդ լեզուն մշտապես քույրանում է նրան: Լեզվին անհնար է տիրել: Ինչպես և քրոջը:

Կա բառ, որը կնքում է լեզուն: Կա բառ, որի անունը անուն է դառնում ողջ լեզվի համար: Մայրը անուն է տալիս մայրենի լեզվին: Սակայն Ցելանի

դեպքում մայրն անուն է տալիս սպանդ իրագործող գործիքին՝ գերմաներենին: Մայրը բառն է, որը պոկվելով բերանից, այդ բերանը վերածում է երբեք չփակվող սպիի: Լեզվի առնչությամբ սա նշանակում է պատկանելության կնիքի կորուստ:

«Ջրարգելակը» բանաստեղծության մեջ ասված է.

*Բերանում,
որի համար սա հազար բառ արժեք,
կորցրի -
կորցրի ես բառը, որ մնացել էր ինձ.
Քույր:*

(S. 92, տողացի թարգմ.՝ Ս.Ս.)

Տան ավարտին ասված «Քույրը» կոչական է: Հետևաբար կորուստ կազմող բառը, որ պահում է հազարավոր ուրիշ բառերի գոյաբանական արժեքը, այդ յուրահատուկ կնիք-բառը, մայրն է: Անկնիք լեզուն փախչում է ոտքի տակից, ահա ինչու Radix, matrix-ում այն հառնում է որպես *անդնդից... քույրացած*: